բաստ էր—ամբողջական հարսանեկան դգեստը հագցրած լինելուց և գլխին թաֆը՝ թագը դնելուց հետո[38]։

Եզան արյան մեջ թաթախած հանգույցի, կողպեքի, դաշույնի, դանակի արձակումը, ինչպես և նաroտի[39] և օսկապի հանումը տեղի էր ունենում հարսանեկան բոլոր ծիսակատարությունները վերջացնելուց հետո թաֆի վերացման հետ միաժամանակ[1] առագաստը մտնելուց առաջ։ Դժվար էր ստուգել՝ ո՞վ էր արձակում գոտին առագաստ մտնելուց առաջ—ինքը կի՞նը, թե՞ ամուսինը, ինչպես վերջինս տեղի էր ունենում կովկասյան լեռնաբնակ մի քանի ժողովուրդների մեջ։

Հարկը ուղարկելուց և եզը մորթելուց հետո սկսվում էր տղայի զգեստավորումը։ Նախ և առաջ օրհնվում էր fքէքը—այն հանդերձը, որը տղայի տնից պիտի ուղարկվեր աղջկան հագցնելու համար։ Քէքի հետ օրհնվում էր, նույն սկուտեղի վրա դրված քաղցրեղենի, շաքարի, վերջերս նաև մի ֆունտ թեյի հետ նաև տղայի գլխարկը և fավօրի սուրը։

Քէքօրհնէքին հաջորդում էր տղայի մորուքի սափրումը։ Դալլաքը նախ գինիով էր վէր անում, մատը թաթախելով այն գինու մեջ, որը պահում էր fավօրն իր աջ բռան մեջ ածած, վառած մոմն էլ նա բռնում էր ձախ ձեռքին։ Տղային շրջապատում էին վառած մոմերը ձեռներին մրկրոնէրը։ Այդ լուսավորված օդակով փեսան պաշտպանվում էր քաջքէրի ոտնձգություններից, բացի դրանից հին ժամանակներից կրակն եղել է սեռական ուժի նշան։ Վառած մոմերը պիտի ապահովեն թաֆվօրի սեռական ուժը։ Դալլաքը սափրելիս մորուքի մի հատվածից մյուսին անցնելիս դադար էր առնում և չէր շարունակում, մինչև որ մի քանի կոպեկ չէր ստանում fավօրից կամ մրկրոնէրից։

Մութն արդեն լավ ընկած էր լինում, երբ թաֆվօրը հագնված, օսկապը կապած՝ իր ընկերներով և զուռնա-ղավալավ գնում էր հարսնատուն։ Թաֆվօրի աջ կողմից հսկում էր fավօրը, ձախից՝ փէսախպէրը, իսկ մրկրոնէրը գնում էին շուրջը բոլորած, բոլորն էլ, ինչպես և այլ մասնակից հարսնվօրնէրը, ձեռներին ունենում էին վառած մոմեր՝ չարհերից ապահովելու համար։ Առջևից գնում էր մի երիտասարդ, պարելով, fքէքը սկուտեղի վրա դրած՝ գլխին պահած։ Հաճախ ճանապարհը լուսավորում էին վառած մաշալլաներով՝[40] չահերով։ Հարսնացուի տանեցիք դիմավորում էին և fքէքը առնում մեծ մասամբ fավօրկնօջ ձեռքից։ Սկուտեղ բերողին մի նվեր՝ կռնակ, յայլուխ էին տալիս։ Թաֆվօրը fավօրի և փէսախպօր հետ կանգնում էր փարդայի առջև, որի եռևը առանձնացած մնում էր հարքը։ Պարելուց և հյուրասիրվելուց հետո բոլորն էլ ցրվում էին, իսկ թաֆվօրը, fավօրը և փէսախպէրը, երբեմն նաև մրկրոնէրից ամենամոտիկները, մնում էին այնտեղ և քնում աղջկա տանը։ Այս անգամն էլ կրկին զոքանչն էր[41], որ հյուրասիրում էր թաֆվօրին, թաֆուն պատառավ կամ շրնթրոկաճաշավ, որը լինում էր հավով փլավ։

Շաբաթ առավոտյան մրկրոնէրը նորից շտապում էին հարսնացուի տունը։ Քահանան նորից օրհնում էր fքէքը, այս անգամ աղջկա հոր կողմից

---

38 Թաֆը պատրաստում էր fավօրը։ Դա մի զարդարուն ասեղնագործած ժապավեն էր, մի վարսակալ, որից, մանավանդ եռևից, կախված էին ծծփէր։ Թաֆը գցվում էր ճակատի վրա։

39 Նաroտը երբեմն կոչվում էր թաֆ։

40 Համմ. արաբ. maşaallah— աչքով չը տա՞նք, ապրե՞ք, բա՛, ահա՛, այսպե՞ս։

41 Մի նոր վերապրում մայրիշխանական ժամանակների։